№ 32 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 16 **1896** ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 16 № 32

ԿՈՍԱՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ Ռուսաստան ուղարկելիս 10 րուբլի, տան և մէկ և տան ամսվանը՝ 9 ր., կէս և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., ամսական 1 րուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ:

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»: իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բռնութիւն քաղաքականութեան դիմակի տակ. Աղէտի դէմ.—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Մատենագրութիւն. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Շվէյցարիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՒԱԴԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Գերմանիայից.

ԲՌՆՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԿԻ ՏԱԿ

Մարտի 1-ին, գերմանական ընէկլեստադում, պատգամաւոր Բեբել խօսեց մի նշանաւոր ճառ, որ արձագանք գտաւ ոչ միայն Գերմանիայում, այլ և Գերմանիայից դուրս:

Բեբել քննութեան ենթարկեց գերմանացիների գործերը Աֆրիկայում և ժողովին ներկայացրեց մի սարսափելի և սխալ պատկեր: Պատգամաւորների ընդհանուր զայրոյթը, որ արտայայտվեց ամենաբուռն կերպով, մի դատավճիռ էր գերմանական քաղաքականութեան դէմ:

„Գաղթականական քաղաքականութեան պատմութիւնը, ասաց Բեբել, զրված է արիւնով և արտասուքներով: Նիւթական ոչ մի շահ չէ ստացանք մենք, թէև միլիոններ ծախսեցինք, իսկ բարոյական կողմից այնպիսի ոճիրներ գործեցինք, որ ամենից մարդը պէտք է ամօթ համարի գերմանական անունն կրելը: Մարակով և օղիով մենք ծաղրի առարկայ դարձրինք եւրօպական լուսաւորութիւնը: Դատարանը ազբրիկական երկու գործողներին դատապարտեց՝ նրանց զղուելի գործերի համար: Իսկ կայ մի աւելի մեծ չարագործ, որ ոչ միայն չէ պատժված, այլ այնքան յանդգնութիւն է ստացել, որ թոյլ է տալիս իրան պատգամներ կարդալ գերմանական ժողովրդի անունից: Դա փիլիսոփայութեան դոկտոր Պետերսն է, որ զինուորական այժերով ճանապարհորդեց Աֆրիկայում: Պետերսը իր գրքի մէջ առում է, որ նա քնքշութիւն ասած բանը չէ հասկանում, երբ պէտք է պատժել: Նա բևեռում էր բեռնակիր մշակներին, եթէ նրանք չէին կատարում իրանց պարտաւորութիւնները. պրել էր տալիս այն զիւղերը, որոնց մասին լսում էր, թէ թշնամաբար կարող են վերաբերվել դէպի գերմանացիները: Պետերսը կատակի ձևով պատմում է, որ մի անգամ նա հանդիպեց վայրենիների, որոնք նստած էին ծառերի վրա, և հրամայեց իր զինուորներին հրացանները դատարկել, և մի տասնեակ վայրենիներ զետին զլորվեցին, ինչպէս ծոեր: Պետերսը վերցրել էր իր մօտ մի նեգրուհի, որի հետ ապրում էր: Նեգրուհին մի օր փախաւ նեգր ծառայի հետ: Պետերսը հրամայեց երկուսին էլ կախել, առաջինին իբր թէ լրտեսութեան համար, իսկ երկրորդին՝ գողութեան համար: Լէյտենանտ Շելլենդորֆ հրաժարվեց պատիժը կատար ածելուց, համարելով այդ բանը մարդասպանութիւն: Այն ժամանակ Պետերսը կանչեց հիւանդանոցի ծառային, որը և կատարեց հրամանը: Երբ զրանից յետոյ Պետերսը մի օր ցանկացաւ այցելել անգլիական միսիոնարներին, Տուկեր եպիսկոպոսը մերժեց ասելով, որ նա անկարող է ընդունել մարդասպանին... Եւ այդպէս, Գերմանիայի ներկայացուցիչները,— վերջացրեց իր ճառը Բեբել—նոր գաղթավայրերում այնպիսի յանցանքներ են գործում, որից ամենիւ մարդու սիրտն է դողում: Լուսաւորութեան փոխարէն նրանք բարբարոսութիւն են տարածում: Մի՞թէ դատաստան չը կայ այդ մարդկանց համար“:

Բեբելի ճառը իրրև որոտ սարսափեցրեց ամենքին: Նոյն իսկ պաշտօնական անձինք ոչ միայն չը հերքեցին Բեբելի ասածները, այլ հաստատեցին: Ժողովը ընդհատում էր խօսողներին զայրոյթի բացականչութիւններով: Կենտրօնի զեկավար Լիբեր զգացված և ոգեւորված ճառով մի կատաղի բողոք յայտնեց Պետերսի և նրա նման գործողների դէմ, համարելով նրանց արարքը անմիջական մի վիրաւորանք գերմանական անուան և պատուի դէմ:

Գերմանական ընէկլեստադի մէջ տեղի ունեցած ինքնաքննադատութեան այդ խիստ արտայայտութիւնը՝ սթափեցնող տպաւորութիւն է գործում: Մխիթարական է, երբ մի ազգ կարողանում է այդքան խիստ վերաբերվել դէպի իր գործողները, և փարիսեցիաբար չէ վարագուրում ազգային ներկայացուցիչների և գործիչների զղուելի գործերը:

ԱՂԷՏԻ ԴԷՄ

Այն աղէտը, որ հասել է Քութայիսի և Թիֆլիսի նահանգներին, ժողովրդական ամենամեծ աղէտներից մէկն է: Մօտ 500 մարդ ճնշել են ձիւնի և փլատակների տակ, իսկ մի քանի տասնեակ հազար մարդիկ ենթարկվել են անտեսական վնասների և կորուստների: Երկրի մի մեծ տարածութիւն անկարող է ուրիշ տարիների նման մշակել հողը, և զիւղական ազգաբնակութիւնը դէռ առաջիկայ տարին էլ կը զգայ այս տարվայ աղէտի ծանրութիւնը:

Ի հարկէ, ոչ ոք մեղաւոր չէ այդ աղէտի համար: Նա առաջ է եկել բնութեան արհաւիրքներից—ձիւնից, անձրևից, հեղեղներից: Նրա առաջն առնել անկարելի էր, որովհետև ոչ ոք նրան չէր սպասում, և եթէ կարողանային նոյն իսկ նախատեսնել, անկարելի էր նրան բոլորովին կանգնեցնել, այլ շատ շատ՝ կարելի էր վնասը փոքրացնել, մեղմացնել:

Թշուառութիւնը անխուսափելի էր: Սակայն, երբ արդէն աղէտը տեղի է ունեցել, միայն մի միջոց կայ մխիթարելու անբաղդատած ժողովրդին,—օգնել նրան, որպէս զի նա ոտքի կանգնի, վերակազմի իր քայքայված տնտեսութիւնը և ապահովի իր կեանքը առաջիկայում:

Վնասված ժողովրդին օգնելու համար, կառավարութեան թոյլտւութեամբ, կազմված են մասնաժողովներ, որոնք ընդունում են նուիրատւութիւններ և բաժանում են ժողովրդին: Ճշմարիտ է, Քութայիսի նահանգի զիւղական ժողովուրդը, որքան կարողանում է, օգնում է իր վնասված հարեւանին, սակայն այդ օգնութիւնը շատ չընչին է, և պէտք կայ մեծ նուիրատւութիւնների և դրամական օժանդակութեան:

Մասնաժողովները նոր են սկսել իրանց գործունէութիւնը, և արդէն ստացել են նուիրատւութիւններ զանազան կողմերից: Մի քանի քաղաքներում տրվել են ներկայացումներ վնասվածների օգտին: Սակայն, պէտք է խոստովանել, նուիրատւութիւնը ամենևին համապատասխան չէ աղէտի մեծութեան և համեմատաբար նա դանդաղ է առաջ գնում:

Քութայիսի նահանգի աղէտի մանրամասնութիւնները արդէն մամուլի միջոցով տարածված են ոչ թէ միայն կովկասի զանազան քաղաքներում, այլ նոյն իսկ ամբողջ Ռուսաստանում, բայց մինչև այսօր ոչ մայրաքաղաքներից և ոչ պետութեան ներքին նահանգներից ոչ ոք արձագանք չը տուեց: Պետերբուրգի յուզմունքը մամուլը, ինչպէս շատ իրաւացի կերպով նկատել է „Новое Обозрѣніе“ լրագիրը, պարծենալով նուիրատւութիւններ է հաւաքում, հանգանակութիւն է բաց անում չաբէշատանի օգտին, բայց անընդունակ և կոյր է ձևանում, և չէ ուզում տեսնել, որ նոյն իսկ պետութեան մէջ, նոյն իսկ մեր երկրի մի ամբողջ տարածութիւն կարօտ է շուտափոյթ օգնութեան, զուցէ աւելի, քան թէ իտալացիները յաղթող հաբէշները: Սակայն „Новое Время“ լրագիրը անընդունակ է հասկանալու համար հասկ, անկեղծ բարեգործութեան զաղափարը, և շատ սիրով առաւելութիւն է տալիս այն տեսակ հանգանակութեան, որը հիմնված է աղմկի, և զատարկ փառասիրութեան կամ պօլիտիկայի վրա...

Թողնենք պօլիտիկան, թողնենք զանազան „տեսակէտները“ և օգնութեան ձեռք մեկնենք Քութայիսի նահանգի վնասված վրաց աղգաբնակութեան: Մենք համոզված ենք, որ հայ հասարակութիւնն էլ կը շտապի իր լուման գցել այս մարդասիրական գործի մէջ, օգնութիւն հասնելով իր հարևան ժողովրդին, որի հետ, չը նայած պատահական անախորժ ընդհարումներին, դարերից ի վեր կապված է շատ սերտ կապերով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԷՑՕՐ

XVII

Երևանի նոր նահանգապետ՝ կոմս Տիզենհաուզէն, որ այս օրերս ճանապարհ պիտի ընկնի իր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Լայպցիգ, մարտի 5/17-ին

«Իտալիա և Աբիսինիա» վերնագրով մի յօդուած է տպված գերմանական «Zukunft» շաբաթաթերթում: Յօդուածը հետաքրքրական է ոչ միայն իր մէջ ամփոփված լուրջ խորհրդածութիւններով, այլ և նրանով, որ հեղինակը իտալացի է—յայտնի հրապարակախօս-սլաւոֆէսօր Սցիպիօ Սիկելէ: Ահա յօդուածի համառօտութիւնը:

«Մշտական խաղաղութեան ապոլեաններ յարատեւութիւնը մեր ժամանակներում—աններելի է: Այս պղատոնական ցանկութեան և բուն իրականութեան մէջ եղած հակասութիւնն ակներև դարձնելու համար, եւրօպայի անդադար սատակացող սպառազինութիւնը կարծէք բաւական չէր: Սակայն ով կարող էր նախագուշակել այս վերջին ամիսների դէպքերը, որոնք աւելի ուժգին կերպով քան հին վարդապետութիւնները, գալիս են հաստատելու «homo homini lupus» զարհուրելի ասացուածը և ապացուցանելու, թէ պատերազմը մարդկային պատմութեան մէջ մի ճակատագրական անհրաժեշտութիւն է...

«Բէքրատ Ջուանէը *) այժմ անչուչա կաղաղակէր. «Ջէնքերը ցած». բայց, ասաղ, նրա աղաղակը կը մնար միայն իբրև վերնագիր մի բոմանի, որովհետև իրողութիւնը արիւնահեղ ողբերգութիւնների մի անընդհատ շարք է և ուրիշ ոչինչ: Կուբայի ապստամբութիւնը, Զէմսօնի արշաւանքը դէպի Տրանսվաալ, հայկական սարսափները և աբիսինեան պատերազմը—այստեղ և այնտեղ բորբոքվող կայծեր են, որոնք յայտարարում են մարդկային բարբարոսութեան և պատերազմական տենչի ներքին կրակը և որոնք ապագայ աւելի ահռելի և աւելի ճակատագրական արկածների նշաններ են ներկայացնում:

«Մենք սարսենում ենք յանուն քաղաքակրթութեան, բայց քաղաքակրթութեան գործնական արդարութեան փոխարէն՝ տեսական պահանջներով ենք միայն բաւականանում: Բայց մենք դատում ենք մեր գործերով. մենք բարբարոսներ ենք: Ինչպէս փոխվել են մեր հանդերձները՝ այնպէս էլ մեր հին հոգևոր մի քանի գործողութիւնների արտաքինն է միայն փոխվել, տեղի տալով նոր տարազների: Խաղաղութիւն, անկախութիւն և համերաշխութիւն—ահա այն յայտարար նշանները, որոնցով ներկայ դարում փոխարինվեց մեծ յեղափոխութեան դէվիզը—liberté, égalité, fraternité. Սակայն խաղաղութեան փոխարէն տիրում է պատերազմ, անկախութեան փոխարէն՝ թոյլ ժողովրդների ճնշումը զօրեղների կողմից, համերաշխութեան փոխարէն՝ գոյութեան անողոք կռիւը: Մենք ջլատում ենք մեր ոյժերը չնորհիւ մեր կամքի և մտայղացումների մէջ եղած հակասութեանը. մեր մտածողութիւնը, զուցէ նաև մեր երազները—լաւ են. բայց մեր միտումները և սրանցից առաջացած գործողութիւնները—տգեղ են և «լաւ» կոչվելու արժանիքից միանգամայն զուրկ:

«Սոցիալական տեսակէտից այս հակասութիւնը ոչ մի դէպքում այնքան չօչափելի կերպով աչքի չէ ընկել, որքան իտալական կօլօնիալ քաղաքականութեան ապարդիւն չրջանում, որ բազմաթիւ զոհերի և ազէտների պատճառ դարձաւ:

«Մենք մեր ազգային վերածնութիւնը պարտական չենք արդեօք ազատութեան համար մղված մի պատերազմի. և հակառակ դրան այժմ պէտք է փորձենք Աֆրիկայում հետամուտ լինել այնպիսի յափշտակութիւնների, որոնց 40 տարի առաջ ենթակայ էր և մեր հայրենիքը՝ ասպարիսան լծի տակ եղած ժամանակ.—ոմանք այսպիսի լեզու են բանեցնում իտալական կառավարութեան դէմ. և պէտք է նկատել, որ այսպիսի յանդիմանական ոճը անհետանալ չէ մնացել—պատասխանը միշտ պատրաստ է եղել:—Այն ժամանակվայ և ներկայ հանգամանքները անհամեմատելի են, ինչպէս անհամեմատելի է նաև Իտալիայի նման լուսաւորված ազգը մի բարբարոս ժողովրդի՝ լեռնցի հաբէշների վերաբերմամբ: Մենք ունենք ընդունակութիւն և իրաւունք մեզ կառավարելու և ի զուր էինք ասպարիական ճնշումներին ենթարկված: Մենք այժմ երբէք դիտաւորութիւն չունենք աբիսինիացիներին վնասելու. նրանք ոչինչ չեն կորցնի մեր պատճառով, ընդհակառակն՝ կօգավեն. մեր արշաւանքները կընծայեն նրանց՝ լուսաւորութեան անգնահատելի բարիքները միայն:

«Բայց ինչումն է բանը. դեռ մի կողմ թողնենք այն հանգամանքը, թէ դիտաւորութիւնները, որոնք մեզ դէպի Աբիսինիա մղեցին ու այնտեղ հասատատեցին, և գործադրված միջոցները, որքան համակերպել կարող էին մի քաղաքակրթական միսիայի սրբազան նպատակներին: Այս

*) Ծանօթ. Նշանաւոր կին գրող, իր սեռի դասը ջերմեռանդ պաշտպանող և «Ջէնքերը ցած» վէպի հեղինակը:

ՄՇԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՀԱՊԵՏՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)

Տպուած 3-րդ անգամ

— Ա —

ԳՈՒՆԱՒՈՐ ՆԱՀԱՊԵՏ

Ի 1826, 1828, 1854 և մեզ հասած 1878 թուականները մեծ ձայնութիւն ունեցած են Գունաւոր Նահապետի անունով։ Ան ամենէն ազդեցիկ եղած է իր ժամանակին, ամենէն հարուստն ու ամենէն ազնուականը։ Ան ունեցած է ամենէն շատ հետեւորդները, ամենէն շատ ծառաները, ամենէն շատ հարճերը, ամենէն շատ ձիերը, ամենէն շատ ոչխարները, ամենէն շատ ուղտերը, ամենէն շատ ցորենը, ամենէն շատ գինին, ամենէն շատ ձէթը, ամենէն շատ ոսկին, ամենէն շատ արծաթը, ամենէն շատ պղինձը, ամենէն շատ երկաթը, ամենէն շատ անասունները, ամենէն շատ ամէն բան։ Ան ունեցած է նաեւ ամենէն շատ թշնամիները։

Գունաւոր Նահապետը ծնած է Ամասիոյ մէջ, ուր իր հայրը՝ Ամասիոյ Նահապետը, ունեցած է ընդարձակ կալուածներ։ Ան ունեցած է նաեւ ամենէն շատ եղբայրները, որոնք ամէնքն ալ ամենէն աւելի կը սիրէին իրենց հօրը։ Ամասիոյ Նահապետը ամենէն աւելի կը սիրէր իր ամենէն կրտսեր որդին, որ ծնած էր իր ծերութեան ատեն։ Ան կը կոչուէր Գունաւոր Նահապետ, որովհետեւ ամենէն գեղեցիկ տղան էր։ Ան ունեցած էր ամենէն գեղեցիկ մազերը, ամենէն գեղեցիկ աչքերը, ամենէն գեղեցիկ ատամները, ամենէն գեղեցիկ ոտքերը, ամենէն գեղեցիկ ձեռքերը, ամենէն գեղեցիկ ամէն բան։ Ան ունեցած է նաեւ ամենէն գեղեցիկ հագուստները։

Գունաւոր

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ամսվա 11-ին

— Ի՞նչ ուժեր ունի, որ ամեն 10-ին, նույն ամսաթվին, ստիպում է Ղազախի ոստիկանապետին հրապարակ հանել Ղազախի ոստիկանական ուժերը, որպեսզի Կոմիտեն կարողանա իր ժողովը գումարել։ Ինչո՞ւ «Ժամանակ»-ը չի հարցնում, թե ինչո՞ւ Ղազախի ոստիկանապետը ամեն անգամ պիտի ստիպվի ոստիկանական ուժերը հանել

Ջը նայելով այդպիսի մի մեծ թվին, որպիսին է 50-ը, որի չափ հայ ուսանողներ եւրօպական և ոչ մի քաղաք չունի, այստեղի ուսանողութիւնը, իբրև մի հաւաքական մարմին, ոչինչ չէ ներկայացնում: Ոչ մի ընդհանուր հարց, ոչ միմեանց օգնելու ձգտում, ոչ հայկական կեանքով հետաքրքրվելու ցանկութիւն դուք չէք գտնի այս բազմանդամ ուսանողութեան կեանքում: Եթէ մարդ դիմում է իւրաքանչիւրին և խօսում այդ առիթով, թէ ինչպէս է, որ հայ ուսանողութիւնը չէ ձգտում մի ընկերութիւն ստեղծելու և դրանով ձեռք բերելու այն, ինչ որ գուցէ իւրաքանչիւրից մենակ չյաջողվի, ամենքի բերանից էլ նոյն խօսքերն է լսում, թէ այստեղ այդպիսի մի բան ստեղծել չէ կարելի, թէ իւրաքանչիւր մէկի ետը աւելի բարձր է կանգնած, քան թէ հազար ու մի ընկերութիւն, կամ հասարակական հարց: Այդ ասում էին այն մարդիկ, որոնք մի քանի տարի է այստեղ են և ամեն տարի էլ փորձելով այդ տխուր եզրակացութեան են եկել: Ջը նայելով այդպիսի մի ընդհանրացած կարծիքի, երկու օր առաջ կրկին փորձ եղաւ ժողով գումարելու և դրանով հայ ուսանողական ընկերութիւն հիմնելու: Ժողովին մասնակցում էին 26 հոգի: Մի մասը չէր եկել ուղղակի այն պատճառաբանութեամբ, թէ հայ ուսանողներն անընդունակ են մի հաւաքական բան անելու:

Ժողովում վարած վիճաբանութիւնները խիստ վատ տպաւորութիւն էին թողնում ունկնդրի վրա: Բաւական է ասել, որ ներկայ եղողներից մի քանիսը վիճում—խօսում էին միայն նրա համար, որ դրանով մի բան ասած լինեն, ինչ ուզում է լինի, թէկուզ հարցին էլ չը վերաբերվէր: Իսկ որ գլխաւորն է, մի քանիսն էլ միայն խօսում էին՝ անհամ սրախօսութիւններով այս կամ այն հակառակորդին մի կերպ խոցելու համար: Հայի ետը իր հրէշային մեծութեամբ վայրում էր այդ ժողովում, որ և վերջացաւ մեր ընտրութեանը յատուկ մի սկանդալով: Յատկանշական է տեսնել, երբ մարդիկ, որոնք յատկանութիւն ունեն գրականագէտների չարքում հաշուել իրանց, մի օտար քաղաքում լաւ նպատակներով կայանալի ժողովը խախտում են այնպիսի փողոցային հայհոյանքներով, որ միայն կովկասի յետ ընկած քաղաքներում կարելի է լսել: Եւ զարմանալին այն է, որ ուսանողութիւնը փոխանակ գանելու մեղաւորին և ժողովից հեռացնելու, ցրվեց ժողովից: Մեր կարծիքով, նախաձինք է ամբողջ ուսանողութեանը՝ ցրվել, ոչինչ չը չինել, թէ ինչ է, այս կամ այն անդամը անկարգ է: Պէտք է գտնել պատճառը, հեռացնել ժողովից և չարունակել առաջ տանել իր գործը: Իսկ եթէ ուսանողութիւնը չի անի այդ, կը լռի՝ միանգամայն մերքից հանելով ուսանողական ընկերութիւն հիմնելու կարիքը, դրանով միայն ցոյց կը տայ իր թուլութիւնը:

Այստեղ օրվայ խնդիրն է հասարակական ուժները փակելու հարցը. ամեն մի կուսակցութիւն եռանդուն կերպով իր ազիտացիան է առաջ մղում բրօշիւրներով և լրագրութեան միջոցով: Հասարակութեան մեծամասնութիւնը դէմ է վախենում: Այդ երևոյթ հէնց օսթիալիստների այդ առիթով կայացրած ժողովում: Ներկայ լինելով այդ ժողովին, տեսնելով վիճաբանութեան ձևը և իրան պահելու տակտիկան ու համեմատելով ծընելի բանուոր դասակարգը հայ ուսանողութեան հետ, այժմ միայն մենք կարողանում ենք համոզվել, թէ որչափ վերջինս ստոր է առհասարակ հասարակական խնդիրների վերաբերմամբ:

Այժմ ծընելում մեծ պատրաստութիւն է տեսնում մայիսին լինելիք «Ազգային ցուցահանդէսի» համար: Բաւական մեծ տարածութեան վրա տներ ու գեղեցիկ չինութիւններ են չինվում: Քաղաքը կամաց-կամաց լցվում է օտարազգիներով, ուստի և բնակարանները թանգանում են:

Միք. Տէր-Մարտիրոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ամէնքից հաղորդում են Բէռլինի լրագիրներին, որ Կրէտէ կղզու գրութիւնը չատ ծանր է: Մաքերի յուզմունքը մահմեդականների մէջ աւելի և աւելի սաստկանում է և սպանում է այնպիսի քնաւորութիւն, ինչպէս էր վերջին տարիներս Փոքր-Ասիայում: Այս օրերս սպանվել են երկու քրիստոնեայ, բայց մարդասպանները բռնելը անհնար եղաւ, որովհետև ժանդարմները հրաժարվում են իրանց պարտքը կատարելուց այն հիման վրա, որ իրանց ոռճիկ չեն վճարում:

—Նէգուս Մենելիքը ասել է իտալացի մայոր Սալսին, երբ նա գնացել էր նրա մօտ բանակցելու հաչտութեան մասին, հետեւեալը. «Ջարմանում եմ, որ իտալացիները, պատերազմելով ազգայնական իդէայի համար, հերքում են այդ իդէան ուրիշ ազգի մէջ և կամենում են ջնջել Հաբէշստանի անկախութիւնը:»

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վարչավայում կայ համր և խուլ անձերի համար կլուբ, որտեղ ամեն չաբաթ տեղի են ունենում պարերեկոյթներ, իսկ բարեկենդանին նոյն իսկ պարում է մեծ բալ: Խուլերը անկարող են, ի հարկէ, լսել երաժշտութեան ձայնը և սակայն նրանք պարում են կանոնաւոր կերպով: Դահլամուրին կցցրած է մի նկար, որ առանձին գործիքի միջոցով պարում է այն պարը, որ ածում է դահլամուրը: Պարողները նայելով նկարին գաղափար են կազմում թէ պարի և թէ նրա արագութեան մասին:

*
**

Եւրօպական լրագիրները հաղորդում են, որ Բերլինգ գիտնականը փորձեր է արել այնպիսի մի չիմուկ պատրաստելու, որով կարելի լինի բժշկել թոքախտը: Բերլինգ առ այժմ չէ վըստահանում այդ փորձերը հրատարակելու, մինչև որ վերջնականապէս կը համոզվի, որ բժշկելու այդ միջոցը աջող հետեւանքներ է տալիս: Հաղորդում են նոյնպէս, որ կօխ չարունակ դիտողութիւններ և փորձեր անելով, այժմ կատարելագործել է թոքախտ բժշկելու իր միջոցը, և չուտով կը հրատարակի:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Պէկին, 13 մարտի: Տեղի տալով Ֆրանսիայի ճնշումին, չինական կառավարութիւնը հրաման տուեց երկաթուղի չինել Լանդ-Ջօից (Յօնկինի սահմանից) դէպի հիւսիս: Ֆրանսիացիները, չինութեամբ այդ ճանապարհի, նպատակ ունեն զրկել անգլիացիներին Սի-կիանգ գետի միջոցով կատարվող առևտրի օգուտներից:

Իոկօհամա, 13 մարտի: Ապատամբները կօրէացում յարձակվեցին եապօնական զօրքի վրա Ֆուդանի մօտ, բայց յետ մղվեցին երկարատև կռուից յետոյ: Կօրէացի զանազան տեղերում սպանված են եապօնացիներ. այդ պատճառով կօրէյա սկսել է ուղարկվել եապօնական պատերազմական նաւեր: Կօրէացի թագաւորը դեռ գտնվում է Սէուլի ռուսաց դեսպանատան մէջ:

Պարիզ, 14 մարտի: Հանրապետութեան նախագահը նշանակել է գեներալ Տուրնիէին և գլխաւոր Մէնէարէին իր ներկայացուցիչներ այն դեսպանութեան մէջ, որ ուղարկվում է թագադրութեան առիթով: Դեսպանութեան գլուխն է գեներալ Բուլանժիզը:

Պարիզ, 14 մարտի: Լէգիոնի գործի մասին յայտնված է վճիռը.—Ուլրիխ, Սիվրի և Սէպտ դատապարտված են 13 տարուայ բանտարկութեան և 500 ֆրանկ տուգանքի, մնացածները արդարացրված են:

Գէնուա, 14 մարտի: Գերմանական կայսերական զոյգը հասաւ այստեղ երեկոյեան ժամի 6-ին, և 7½-ին «Հոհէնցօլէրն» չոգենաւով մեկնեց Նէապոլ: Վիլհէլմ կայսրը գոչեց. «կեցցէ թագաւորը»: Հաւարակութիւնը ազնորված պատասխանեց՝ «կեցցէ կայսրը»:

Լօնդօն, 14 մարտի: Համայնքների ժողովի նիստում կէրզօն յայտնում է, որ լօրդ Դիւֆֆերինին առաջարկված է դիմել Պարիզի կաբինէտին և հարցնել, թէ ինչ նշանակութիւն է տալիս նա այն խօսքին, որ կայ փետրվարի 11-ի ֆրանսիական յայտարի մէջ, թէ Ֆրանսիան գրաւել է Մադագասկարը և սիրապետել է այդ կղզուն: Կէրզօն աւելացրեց, որ այդ մասին լինելիք զատողութիւնները պէտք է յետաձգել, մինչև որ Ֆրանսիայի կողմից տեղեկութիւն կը հաղորդվի այն դաշնագրերների մասին, որ Մադագասկարը կապել է օտար պետութիւնների հետ:

Լօնդօն, 14 մարտի: Սալիսբիի և Բ. Դրան վրա անհաճոյ տպաւորութիւն է թողել այն հանգամանքը, որ նրանց ոչինչ չեն հաղորդել Դոնգօլայի արշաւանքի մասին: Դժգոհութիւն է յայտնված և խէդիվի դէմ նրա համար, որ նա զանց է արել Բ. Դուռը: Մուխտար-փաչային յանդիմանութիւն է արված նրա համար, որ նա չէ կարողացել խափանել արշաւանքը: Բ. Դուռը դիմել է Ֆրանսիայի և Ռուսաստանի միջամտութեան, եգիպտոսի գրութիւնը կանոնաւորելու համար:

Սօֆիա, 14 մարտի: Ռուսաց և բոլգարական կառավարութիւնների մէջ համաձայնութիւն է կայացել Պետերբուրգում բոլգարական դիպլօմատիական ագէնտ նշանակելու մասին:

Պէկին, 14 մարտի: Մարտի 11-ին վերջնականապէս ստորագրված է չինական փոխառութեան պայմանագիրը, այդ փոխառութիւնը կատարում է գերմանօ-անգլիական սինդիկատը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՓԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Յանկանում է ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ ունենալ Թիֆլիսում: կարող է սովորեցնել հայոց լեզու, ֆրանսերէն, նոյնպէս և թուաբանութիւն: Յանկացողները, պայմանները իմանալու համար պէտք է դիմեն առաւօտեան 10—12 ժամը, հետեւեալ հասցէով. Բեթղեհէմի փողոց, № 2, տուն Մինասեանի: (№ 32) 1—8

ՓՆՏՈՒՄ ԵՄ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ

Հայերէն և ռուսերէն լեզուից: Յանկացողները հասցէները կարող են թողնել „Տարազի“ խմբագրատանը: (№ 30) 3—5

Մեծ Արժանաւորութեան
ՀՈՏԱԻԷՏ ՋՐԵՐ
„Պարսկական եասաման“
Ծաղկահոտ Օ-դէ-կօլօն
„Պարսկական եասաման“
Հոտաւէտ Ջրեր „Պարսկական եասաման“
Սապօն „Պարսկական եասաման“
Պօմադա „Պարսկական եասաման“
Ընկերութիւն
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
Պրէյս-կուրանտը ձրի:
(առ. 30) (№ 73) 12—12

ՆԿԱՐՈՒՄ ԵՄ աղլասի վրա, յայտնի Հայ մարդկանց և զանազան ցանկացողների պատկերները: Բազմոցի ԲԱՐՁԻ ԵՐԵՍԻ համար 3—5 րուբլի. ԼՈՒՍԱՄՓՈՓ—մետաքսեայ կտորների վրա՝ 6 հայ գործիչների պատկերներով, 3—4 րուբլի. ՄԵՏԱՔՍԵԱՅ ԹԱՇԿԻՆԱԿՆԵՐ 60 կ.—1 ր.: ԺԱՊԱԻԻՆՆԵՐ վրայիշեալ պատկերներով 20—25—30 կօպ.: Յանկացողներին կարող եմ ուղարկել ամեն քաղաք:

Դիմել այս հասցէով ТИФЛИСЪ, Кочубѣевская у. д. Дробышева, № 21. А. РОДІОНОВОЙ.
(№ 28) 3—4

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յայտնում է, որ ընկերութեան կանոնադրութեան § 31-ի համաձայն, մարտի 17-ին, կիրակի, երեկոյեան ժամը 7½-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում նշանակված է ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, որի պարապմունքի առարկաներն են.

ա) 1895 թ. տեղեկագրի, հաշուի և 1896 թ. նախահաշուի ընթերցումն ու հաստատումը.

բ) Պաշտօնատար անձերի ընտրութիւն. վարչութեան մի անդամի, գանձապահի, քարտուղարի և խմբագրական մանուածոյովի վեց անդամների:

Վարչութիւնը ընդ սմին հարկ է համարում յայտարարել, որ վարչութեան վերջին նիստը նշանակված է մարտի 16-ին, չաբաթ օր, երեկոյեան, և մինչև այդ նիստը կը լինի այն նոր անդամների ընդունելութիւնը, որոնք կը ցանկանան մասնակցել ընդհանուր ժողովին:

Ընկերութեան 1895 թ. տեղեկագիրը ստանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել ընկերութեան գրասենեակը, Բարեառնակայա փողոց, № 4, սկսած ամսիս 14-ից: (№ 30) 3—3

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ
Ն. Յ. ՌՈՁԱՐՁԵԱՆՑԻ

Գոյութիւն ունի 1858 թուականից

ԳՈՐԾԱՐԱՆՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

ՓԱՍՏ ԵՒ ՈՉ ԻՆՉՈՆԱԳՈՎՈՒԹԻՒՆ

Ձանձանք համարելով ի վնաս ծխողների թանգացնել և գեղեցկացնել ծխախոտի արկղները և փաթեթները *), ես աւելի լաւ եմ համարում պարզներ ծխողներին տալ բարձր տեսակի ծխախոտ, քան արտաքուստ գեղեցիկ փաթեթներ: Խնդրում եմ ուշադրութիւն դարձնել մեր բոլոր արտադրութիւնների վրա. նրանց յատկութիւնը բարձր է ամեն մրցումից և նրանք արժանի են ուշադրութեան՝ իրանց բարձր յատկութիւնով, որին կարելի է հասնել միայն աչխատելով և ծախս անելով, միայն ծխախոտի յատկութիւնը լաւացնելու և ոչ թէ արտաքին փաթեթները գեղեցկացնելու վրա: Պարոններ ծխողներին խնդրում եմ փորձել անձամբ և համոզվել:

Գործարանի հիմնադրման տարեթիւ 1858

Գործարանի № 181

1896 թ. ՅՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԾԽԱԽՈՏՆԵՐԸ ԵՒ ԴԱՆԻԿՆԵՐԸ

ՊԱՊԻՐՕՍՆԵՐ (Գլանիկներ)	ՊԱՊԻՐՕՍՆԵՐ (Գլանիկներ)	ԾԽԱԽՈՏ
ՇԱԴԱՆԱԿԱԴՈՅՆ Ֆրանսիական Թղթից, քիմիապէս հետազօտված № 5 „ԷԿՍՏՐԱ“ 25 հատը 15 կ., 100 հ. 60 կ. 25 հատը 25 կ., 100 հ. 1 ր.	ՍՊԻՏԱԿ Թղթից № 36 ԻԻԺՆԸՑԱ. 10 հատը 3 կօպ.	կովկասեան, սկսած 48 կօպեկից մինչև 3 րուբլի ֆունտը: Մաքուր տաճկական, թիւթեղեայ արկղների մէջ, սկսած 4 րուբլիից մինչև 12 ր. ֆունտը:

ԾԽԱԽՈՏ ՏԱՃԿԱԿԱՆ ՍԵՐՄԵՐԻՑ, ՖՈՒՆՏԸ 1 ՌՈՒԲԼԻ 52 ԿՕՊԵԿ

կարելի է ստանալ ամեն տեղ: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են արագ և ճշդութեամբ:

Ցարգանօք՝ գործատէր Ն. ՌՕԶԱՐՁԵԱՆՑ

*) Թանկագին փաթեթները և արկղը միայն վնասում են ծխախոտի լաւ յատկութեան:
(№ 28 ե. չ.) 3—5

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Марта 1896 г.

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.